




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

973

Օրվանակները հաջորդ
պատճեններով

9(07)

0-88

1922

14 JUL 2005



ՊՐԱԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՂՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԷՔ

9 (57) ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԺՂՈՎԲԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Q-88

4. 2.

ՍՈՑԻԱԼԻՍՏԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԼԽԱԽՈՐ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍԵՆՏԵՐ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴՊՐՈՑԻ



9(07)
0-88

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ N: 3.

04 SEP 2013
MAY 10 1952

923

370
1952-ԾՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Առաջին աստիճանի դպրոցներում պատմութեան դասաւանդումը սկսւում է չորրորդ խմբում, ենթադրաբար երկրորդ կիսամեակի (յունւարի) սկզբից: Աշակերտը մինչ այդ արդէն որոշ հասկացողութիւն է կազմում հասարակական երևոյթների մասին՝ յատկապէս մայրենի լեզուի դասերին: Հայրենագիտութիւնն ու աշխարհագրութիւնն այդ ուղղութեամբ ընդարձակում են նրա գիտելիքները շրջանը, լրացնելով և կարգաւորելով հասարակական երևոյթների մասին նրա արած գիտողութիւնները: Այստեղ է, որ աշակերտը սկսում է ուշադրութիւն դարձնել այն երևոյթների վրա, որ մարդու և բնութեան, հասարակական և բնական միջավայրի առնչութիւնն են ցոյց տալիս: Մարդկային հասարակութիւնը—մարդկային կուլտուրան—դառնում է հետզհետէ նրա հետաքրքրութեան առարկան: Աշակերտը սովորում է դիտել և բմբռնել հասարակական երևոյթները տարածութեան կոնկրէտ պայմաններում:

Աւելի թույլ հասկացողութիւն ունի նա ժամանակի մասին: Յատկապէս դժւար է նրան հետեւել որոշ ժամանակաշրջանի մէջ ամփոփւած հասարակական կեանքի զարգացման բնթացքին: Եւ ահա այդ դժւարութիւնն է, որ պիտի յաղթահարի ուսուցիչը պատմութեան դասին:

Այստեղ ևս ելակէտ պիտի ընդունել անձնական փորձն ու հարազատ կուրկաւիժի կեանքը: Ինքնակենսագրութիւնը, ընտանեկան և դպրոցական կեանքի հետ կապւած յիշողութիւնների ժամանակադրական կարգաւորումը, այստեղ դիտած երևոյթների պատճառական բացատրութիւնը պէտք է նպաստեն անմիջական հասարակական շրջավայրի մասին աշակերտի ունեցած փորձի և գիտողութիւնների ընդարձակման ու «պատմական» բմբռնման: Աշակերտը դիտում է այնուհետև հարազատ գիւղի (կամ քաղաքի) հաւաքական կեանքը և այն փոփոխութիւնները, որ տեղի են ունեցել այդտեղ յիշողութեամբ ընդգրկուող փորձի սահմաններում:

ՏՊԱՐԱՆ ԴԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԷԶՄԻԱՇԻՆ—1922.

1004
15168

րում: Հարազատ միջավայրի սյդ տեսութիւնը նպատակ պիտի ունենա մշակել դիտած երևոյթներն պատճառական ըմբռնումն, բեւեռելով աշակերտի ուշադրութիւնը նրա տեսողութեանը կամ յիշողութեանը մատչելի ընթացիկ կեանքի ամբողջական պատկերի վրա:

Հասնելով այդ նպատակին՝ պէտք է այնուհետեւ պատմական դիտողութեան նկարագրութեան և բացաղութեան առարկա դարձնել հէնց ընթացիկ կեանքի այդ պատկերը: Եւ այստեղ է, որ պէտք է հասկանալի դառնա աշակերտին պատմութեան դասի նպատակը՝ դիտել հասարակական ընթացիկ կեանքը, հետեւել նրա զարգացմանը անցեալի փոխի վրա, որոշել ներկա սերնդին վիճակած դիրքն ու դերը երևոյթների ձեւափոխութեան մէջ և՛ մի յայտնի չափով, կանխատեսել այն, ինչ բերում է մեզ դալիք օրը:

Պատմութեան դասաւանդման այս «յետադարձ» (աւելի ճիշտ կլինէր ասել՝ վերլուծողական) եղանակը պէտք է գործադրութիւն գտնի պատմութեան ներառական դասերի մէջ այնչափ, որչափ դա հնարաւորութիւն է տալիս ուսուցչին գաղափար տալ աշակերտին առարկայի ընդհանուր բովանդակութեան, ուսումնասիրութեան նպատակի և մեթոդների մասին՝ ելակէտ ընդունելով աշակերտի անձնական փորձը և այն, ինչ ծանօթ է նրան իր ընկերների պատմածներէից: Այդ եղանակով պատմութեան առաջին դասերը հնարաւորութիւն կտան աշակերտին ընկերների և ուսուցչի օգնութեամբ գաղափար կազմելու տիրող հասարակարգի, նրա գոյութեան և ծագման պարագաների մասին, կանգ առնել անդրկովկասեան, ռուսական և համաշխարհային յեղափոխութեան զարգացման շրջանների վրա, ցոյց տալ այն գեներտիկական կապը, որ կա համաշխարհային յեղափոխութեան և համաշխարհային պատերազմի միջև և, վերջապէս, բնութագրել ընթացիկ դարը որպէս պրոլետարիատի և բուրժուազիայի դասակարգային կռից առաջացած պատմական երկու խոշոր դարաշրջանների—կապիտալիզմի և կոմունիզմի—մի փոխանցում, կապիտալիզմի և կոմունիզմի՝ ուսուցչի կողմից արած ընդհանուր հակադրութիւնն ու բնութագրութիւնը պէտք է դառնա մինչայժմեա բոլոր եզրակացութիւնների ամփոփում: Իսկ զալիք կոմունիզմի և նախնական կոմունիզմի հակադրական համեմատութիւնը կարող է ելակէտ դառնալ պատմութեան բուն նիւթի համար, որտեղ տոհմային կենցաղի նկարագրութիւնը պէտք է հիմնւած լինի նախնական կոմունիզմի տեսութեան վրա:

Եթէ ուսուցչին յաջողի այսքանով միաժամանակ նաև հետաքրքրութիւն առաջացնել դասարանում գէպի պատմութեան

առարկան՝ առաջադրած ծրագիրը կարող կլինի այնուհետեւ առաջնորդ լինել նրան դասաւանդութեան ժամանակ: Նիւթի դասաւորութիւնն այստեղ կատարւած է երկու ուղղութեամբ—պարզ երևոյթների դիտողութիւնից աշակերտն անցնում է բարդ երևոյթների դիտողութեան և հարազատ միջավայրի պատմութիւնից՝ օտար միջավայրի պատմութեան: Այս առումով ծրագիրը փորձում է սպառել դասաւանդելիք նիւթը մի կողմից ծանօթացնելով աշակերտին հասարակական զարգացման տոհմատիրական, ֆէոդալական, կապիտալիստական և կոմունիստական աստիճաններին, իսկ միւս կողմից ընդլայնել նրա տեսութեան շրջանը անցնելով աստիճանաբար Հայաստանից և յարակից երկրներից Ռուսաստան և Արեւմուտք, ընդգրկելով այդ երկրների հաւաքական կեանքը ընդհանուր պատմական մի տեսութեամբ:

Թողնելով, որ դպրոցական փորձը իր սրբագրութիւնները մոցնի ներկա ծրագրի մէջ, անհրաժեշտ ենք համարում նիշել նիւթերի այդօրինակ դասաւորութեան գլխաւոր առաւելութիւնը: Պատմութեան դասի կենտրոնում չի դրւում որեւէ «ազգի» անցեալը կամ «ընդհանուր—պատմական» իդէալիստական մի տեսութիւն, այլ իրանց աղղեցութեամբ անմիջական միջավայրի ընթացիկ կեանքին անդրադարձող մի շարք հասարակութիւնների կեանքը, ընդհանուր—պատմական տիպական յաջորդականութեան և պատմական երևոյթների ընդհանուր մի տեսութեան մէջ: Այդ հանձնակ կոնկրէտից վերացականին և մասնաւորից՝ ընդհանուրին: Հրաժարելով երևոյթների ծխական սեմինարիստական ըմբռնումից, պատմութեան դասերն այդ միջոցով կարող կլինեն ազդու գործօն դառնալ մանուկ սերնդի սոցիալական դաստիարակութեան:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Դ. և Ե. խմբերի (մօտաւ. 11—12 տար. և 12—13 տ.)

Ա. ՏՈՀՄԱՅԻՆ ԿԵՆՅԱԴ.

§ 1. Առաջաւոր Ասիայի ներկա և անցեալ վաչկատուն ցեղերը: Սեմիտ, հաթ և խալդի ցեղերի տարածւելն ու տեղաւորւելը մեծ գետերի հովիտներում: Նրանց նախնական տոհմային կազմակերպութիւնն ու կուլտուրան Եգիպտոսում, Միջագետքում, Ասորիքում և Ուրարտիում: Ֆէոդալական և քաղաքային կուլտուրայի տարրերը այդ ցեղերի զարգացման յաջորդ շրջանում:

§ 2. Արիական ցեղերի—հայերի, իրանցիների, յոյների, իտալիկների, կելտերի, գերմանների և սլաւոնների տնտեսութիւնը, թափառումները, վերջնական տեղաւորումը, տոհմային կազմակերպութիւնը, հաւատալիքներն ու առասպելները: Հոմերոսի դարը: Ժողովրդական էպոսը Արեւելքում և Արեւմուտքում:

Բ. ՖԷՈԴԱԼԻԶՄ

§ 3. Արիախալդական Հայաստանի կազմակերպումը, նրա տնտեսական կենցաղն ու դասակարգային շերտաւորումը. տառնաբանական շրջան. (Բսենոֆոն): Հայաստանի տոհմային ազնականութիւնն ու ֆէոդալական հանրակարգի սկզբնաւորումը, Արեւելեան ֆէոդալիզմը Իրանի գերիշխանութեան շրջանում:

§ 4^a). Յոյն և լատին ցեղերի քաղաքային կազմակերպութիւնը: Դասերի շերտաւորումը Աթէնքում և Հռոմում: Հողային և քաղաքական բեֆորմներ: Հասարակապետութիւն: Ստրկատիրութիւն և լատիֆունդիա: Դասակարգային պայքարը Յունաստանում և Իտա-

^a) Ամբողջ այս §-ը կարելի է անցնել նաև սրակն «կապիտալիզմի» ներածութիւն § 15-ից առաջ:

լիայում: Միապետութեան և իմպերիալիզմի յաղթանակը: Միջերկրական ծովի և Արեւելքի նւաճումը: Միջազգային առևտուրը:

§ 5. Հայաստանը և Առաջաւոր Ասիան Սելևկեան իշխանութեան ներքո: Արեւելեան ժողովրդների նոր կազմակերպութիւնը՝ Արշակունիները Պարսկաստանում, Արտաշէսեանները Հայաստանում: Տիգրան մեծ:

§ 6. Արեւելքի (Պարսկաստանի, Հայաստանի և հարեան երկրների) ֆէոդալական կազմակերպութիւնը Արշակունիների օրով և Արեւմուտքի աւետրական տնտեսութիւնը կայսրութեան շրջանում: Արեւելքում հողատիրական—ճորտատիրութիւն, Արեւմուտքում փողատիրական ստրկատիրական տնտեսութիւն. այս հողի վրա աճող կուլտուրան. կրօնների խառնուրդը. բրիստոնէութեան ծագումը և եկեղեցու կազմակերպութիւնը. տնտեսական և դասակարգային պայմաններ հելենիստական Արեւելքում և լատինական Արեւմուտքում:

§ 7. Նախարարական Հայաստանի կազմակերպութիւնը Տրդատ Ա-ի և Տրդատ Գ-ի ժամանակներում. կուլտուրա. եկեղեցի. զրբերի գիւտը: Հայաստանը և Վրաստանը հակելով դէպի արեւմտեան կուլտուրան, պայքարում են Պարսկաստանի դէմ Դ. և Ե. դարերում (Վարդան և Վահան):

§ 8. Հռոմէական կայսրութեան անկման տնտեսական պտտճառները: Ազգերի մեծ զաղթը: Գերման և սլաւ ցեղերի տարածւելը կայսրութեան հողի վրա. ռոմանական և գերմանական ֆէոդալիզմի սկզբնաւորութիւնը և կազմակերպումը (Կարլոս Մեծ): Կայսրութիւն և պապականութիւն:

§ 9. Ֆէոդալական Պարսկաստանի և Բիւզանդական կայսրութեան ուժասպառումը: Արաբ առհմերի կազմակերպութիւնը Իսլամի տիրապետութեան շրջանում: Սալիֆատ:

§ 10. Հայաստանը և Վրաստանը Արաբների գերիշխանութեան ներքո: Ճորտատիրութիւնը և քաղաքային տնտեսութիւնը Հայաստանում և Վրաստանում: Հայաստանի և Վրաստանի քաղաքական կազմակերպութիւնը այդ շրջանում:

§ 11. Թուրք—թաթարական վաչկատուն տոհմերի արշաւանքը: Հայաստանը թուրք—թաթարական ցեղերի տիրապետութեան ներքո: Ֆէոդալական Հայաստանի անկումը:

§ 12. Ֆէոդալական Եւրոպայի զարգացման ընդհանուր ընթացքը. ֆէոդալիզմի զարգացումը Ռուսաստանում. Գերմանիայում, Ֆրանսիայում և Անգլիայում: Սաչակիր արշաւանքի պատճառներն ու հետեանքները Արեւելքի և Արեւմուտքի համար:

§ 13. Սաշակրաց պետութիւններ: Կիլիկիա: Բիւզանդիայի անկումը: Օսմանեան թիւրքեր և նոր Իրանը: Հայ-վրացական ազատագրական շարժումների սկզբնաւորութիւնը: Մելիքութիւններ: Հայոց հարցի սկզբնաւորութիւնը Արեւմտեան Եւրոպայում Ռուսաստանում: Իսթայէլ Օրի և Դաւիթ-բէկ:

§ 14. Արեւմտեան Եւրոպայում զարգացում է քաղաքային տնտեսութիւնը և բուրժուազիան: Քաղաքների պայքարը ֆեոդալական իշխանութիւնների դէմ: Ազատ քաղաքներ և քաղաքների միութիւններ: Քաղաքային տնտեսութեան ազդեցութիւնը գիւղի վրա: Գիւղացիական շարժումներ: Ֆէոդալիզմը քայքայման պրոցեսը:

Գ. ԿՍՊԻՏՈՒԻԶՄ

§ 15. Հարաւային և Հիւսիսային Եւրոպայի առեւտրական կապիտալի աճումը: Առեւտրական բուրժուազիան և ազգային պետութիւնների կազմակերպումը (Ֆրանսիա, Նիդերլանդիա, Անգլիա): Պայքար առեւտրական շուկաների համար: Գիւտեր և յայտնագործութիւններ: Հումանիզմ և ռենեսանս: Ռեֆորմացիա:

§ 16. Կապիտալիստական տնտեսութիւնը Անգլիայում: Անգլիական յեղափոխութիւնը և պառլամենտարիզմը: Գաղութային քաղաքականութիւն: Ամերիկայի Միացեալ Նահանգների ապստամբութիւնը:

§ 17. Առեւտրի և արդիւնաբերութեան զարգացումը Ֆրանսիայում: Երրորդ դասակարգ: Բուրժուաների միահեծանութիւնը: Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը: Նապոլէոնը որպէս տնտեսական և դատակարգային նոր յարաբերութիւնների արտայայտիչ:

§ 18. Ռուսական միահեծանութիւնը Պետրոս Առեւ, Եկատերինա II-ի և Ալէքսանդր I-ի օրերում: Հակաչեղափոխական դաշնակցութիւն Ֆրանսիական յեղափոխութեան դէմ: Եւրոպական ռէակցիան:

§ 19. Արդիւնաբերական կապիտալի զարգացումը Արեւմտեան և Միջին Եւրոպայում: Ազգային շարժումներ: Դասակարգային պայքար բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Սոցիալիստական շարժում: Փետրուարեան յեղափոխութիւնը: Լիւի Բոնապարտ:

§ 20. Յարիզմի գերիշխանութիւնը Եւրոպայում: Արեւելեան հարցը: Անդրկովկասի նւաճումը: Հայերի հասարակական զարգացումը առեւտրական կապիտալի տիրապետութեան շրջանում:

§ 21. Եւրոպական պետութիւնների տնտեսական և գաղու-

թային շահերի ներհակութիւնները 19-րդ դարի երկրորդ կէսերին: Ֆրանս-պրուսական պատերազմ և Պարիզի կոմունան: Երեւակ զինակցութիւն և երբեակ համաձայնութիւն:

§ 22. Ռուսաստանի արդիւնաբերական զարգացումը: 1861 թ. ռեֆորմը: Նարոդնիկական շարժում: Ռուս-տաճկական պատերազմ: Հայկական հարցը և հայերի ազգային-յեղափոխական շարժումները: Ռուս-Ճապոնական պատերազմ: 1905 թ. յեղափոխութիւնը:

§ 23. Կապիտալիզմի և իմպերիալիզմի ճշնաժամը: Համաշխարհային պատերազմ: Ռուսական փետրուարեան և հոկտեմբերեան մեծ յեղափոխութիւնները:

Դ. ԿՈՄՈՒՆԻԶՄ

§ 24. Պրոլետարիատի զիկտատուրան և խորհրդային իշխանութիւն, բանւոր-գիւղացիական Ռուսաստանի պայքարը ռուսական և համաշխարհային հակաչեղափոխութեան դէմ: Կոմունիստական ինտերնացիոնալ:

§ 25. Ազգային հարցը և խորհրդային իշխանութիւնը: Խորհրդային կարգերի յաղթանակն Անդրկովկասում: Մայիսեան ապստամբութիւնը և նոյեմբերեան յեղաշրջումը Հայաստանում: Քաղաքացիական պատերազմ և յեղափոխութեան յաղթանակը:

§ 26. Խորհրդային սահմանադրութիւն: Խորհրդային երկըրների փոխյարաբերութիւնները: Նրանց ներքին և արտաքին քաղաքականութիւնը: Ընթացիկ մոմենտը: Համաշխարհային յեղափոխութեան հեռանկարները:





3

ՀՀ Ազգային գրադարան



NL0405781

